

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/63**

ք. Երևան

« 02 » « 07 » 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս Աշոտ Կիրակոսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինարար» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Նալբանդյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՆՎԱԳԱՆՈՒՄԲ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Կողմերի միջև կնքվող ֆինանսական միջոցների առկայության մասին լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 180 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերութայնների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5

Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներն երկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորելայանձի՝

աշխատանքի իրականացմանն կատարման քտեխնիկական հսկողություն իրականացնելու և պատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած

աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու ղեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝

աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված ղեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2

Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ ընել ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերությունների այտնաբերելու ղեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից

աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3

կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու ղեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունքունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3

կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու ղեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի

կետում նշված ժամկետների խախտման ղեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարելանձամբ,

պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իրուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով և պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել

աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմունտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մունտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4

Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջներին կանոններին մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու և արավորի հետևանքներին մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համարվճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի

3.1.4

կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում միատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման և անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից թխող ջգամի տժախսերը:

3.4.8

Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառու և պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9

Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվան հիցիա շված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառու և պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11

Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթացն սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՍՈՒՄ ԱՆԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառու և պարտավոր է իր հաշվին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

(լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5

Աշխատանքիկամպայմանագրիօրացուցայինգրաֆիկովնախատեսվածառանձինտեսակիաշխատանքների,

փոփոխման և ավարտի արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին և համապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմակտ՝

թվարկելով լիցենզիայի վերացման համար պահանջվող՝

կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնման սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել նախատեսված աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **36,076,587 (երեսունվեց միլիոն յոթանասունվեց հազար հինգ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ, որից 6,012,764 (վեց միլիոն տասներկու հազար յոթ հարյուր վաթսուներու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **12,000,000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամը**, Պատվիրատու փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ<sup>1</sup>:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառու իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է

աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳ x ԾԳՏ x Ծ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է<sup>2</sup>.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

<sup>1</sup> Կապալառու կարող է իրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

<sup>2</sup> Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

6.1

Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակիև սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2

Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուի գյուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրոամբողջի հինգ հարյուրերորդական) տոկոսիչափով:

6.3 Պայմանագրի

3.1.3

կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4

կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրոամբողջի հինգ տասներորդական) տոկոսիչափով<sup>3</sup>:

6.4 Պայմանագրի

6.2

և

6.3

կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի

5.3

կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուին կատարման քանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրոամբողջի հինգ հարյուրերորդական) տոկոսիչափով:

6.6

Պայմանագրով նախատեսված ճեպերում կողմերին իրենց պարտավորությունները կատարելու կամ չպատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և

(կամ) տուգանքների վճարումը կողմերին չհազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու մասին կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ճազել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրի եղելը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղակապ հեղուկ մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

<sup>3</sup> Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլանձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4

Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5

Պայմանագրում փոփոխություններ կլրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ծեօք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում<sup>4</sup>:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները<sup>5</sup>:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

<sup>4</sup>Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>5</sup>Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակությունների միջոցով: Համաձայնություն ձեռք բերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնցում են հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմի ներկայացված մեկ օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14

Սույն պայմանագրի հետ կապված հարաբերություններին կատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


**8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>6</sup>**

<sup>6</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Չնումների մասին" 22 օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման  
հիմնադրամ  
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,  
Կ.Ուլնեցու 31  
ՀՎՀՀ՝ 00846441  
Հ/Հ՝ 900018001231  
Կենտրոնական գանձապետարան  
Գործադիր տնօրեն  
Աշոտ Կիրակոսյան



/ստորագրություն/  
Կ.Տ




Անհրաժեշտության դեպքում պայմանագրի օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շինարար» ՍՊԸ  
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի  
Երևանյան խճ 20

ՀՎՀՀ՝ 05511545  
Հ/Հ՝ 24103032125101  
Բանկ՝ «Յունիբանկ» ՓԲԸ «Գյումրի»  
մ/6  
Տնօրեն  
Ալբերտ Նալբանդյան



/ստորագրություն/  
Կ.Տ



պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ

Հավելված թիվ 1  
Օձ Թ.Ֆ.Ն. 2019թ. կնքված  
«Շ-ԳԿ-ԱՇՁԲ-2019/63» ծածկագրով պայմանագրի

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ<sup>7\*</sup>**

«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ՆՎԱԳԱՆՈՒՄԲ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

**Ներկայացված են կից ֆայլով**

\* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման  
հիմնադրամ  
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,  
Կ.Ունեցու 31  
ՀՎՀՀ՝ 00846441  
Հ/Հ՝ 900018001231  
Կենտրոնական գանձապետարան  
Գործադիր տնօրեն  
Աշոտ Կիրակոսյան

  
/ստորագրություն/  
Կ.Տ.



**ԿԱՊԱԼԱՏՈՒ**

«Շինարար» ՍՊԸ  
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի  
Երևանյան խճ 20  
ՀՎՀՀ՝ 05511545  
Հ/Հ՝ 24103032125101  
Բանկ՝ «Յունիբանկ» ՓԲԸ «Գյումրի»  
մ/ճ  
Տնօրեն  
Ալբերտ Նալբանդյան

  
/ստորագրություն/  
Կ.Տ.



<sup>7</sup> Ծավալաթերթ-նախահաշիվը հրատարակվում է ենթադրաբար ըստ աշխատանքների կատարման արժեքների:


Հավելված թիվ 2  
 02.04.2019 թ. կնքված  
 «ՇԾ-ԳԿ-ԱԸՁԲ-2019/63» ծածկագրով պայմանագրի

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ  
 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելից աշխատանքների հատանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը*	
		Սկիզբը	Ավարտը
1	«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՆՎԱԳԱՆՈՒՄ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ »	Ժամկետի հաշվարկն կիրականացվի Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած	180 օր տևողությամբ
ԸՆԴԱՄԵԼԸ		Ժամկետի հաշվարկն կիրականացվի Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած	180 օր տևողությամբ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման  
 հիմնադրամ  
 Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,  
 Կ.Ուլենցու 31  
 ՀՎՀՀ՝ 00846441  
 Հ/Հ՝ 900018001231  
 Կենտրոնական գանձապետարան  
 Գործադիր տնօրեն  
 Աշոտ Կիրակոսյան

  
 /ստորագրություն/  
 Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շինարար» ՍՊԸ  
 Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի  
 Երևանյան խճ 20  
 ՀՎՀՀ՝ 05511545  
 Հ/Հ՝ 24103032125101  
 Բանկ՝ «Յունիբանկ» ՓԲԸ «Գյումրի»  
 մ/6  
 Տնօրեն  
 Ալբերտ Նալբանդյան

  
 /ստորագրություն/  
 Կ.Տ

Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի  
 հիման վրա, ապա «Սկիզբը» սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ  
 նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:



Հավելվածթիվ 4  
02 07 20 թ. կնքված  
«ՀԾ-ԳԿ-ԱՇՁԲ-2019/63» ծածկագրով պայմանագրի  
Պատվիրատու

Պայմանագրիկողմ  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելուվայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելուվայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄԴԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.  
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_  
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  
» «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն  
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	Կատարված աշխատանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճար ման ժամ անա կացո ւյցի/
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
	տեխնիկական ընդամասնագրի համառոտ չարտդրանքը						

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը ընդ որակյալ եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը  
 (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
 զնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

#### Հանձնեց

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

#### Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

Հավելված 5  
«02» «07» 2019 թ. կնքված  
ՀԾ-ԳԿ-ԱԸՁԲ-2019/63 ծածկագրով պայմանագրի

## Գծագրերը կից

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման  
հիմնադրամ  
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,  
Կ.Ույնեցու 31  
ՀՎՀՀ՝ 00846441  
Հ/Հ՝ 900018001231  
Կենտրոնական գանձապետարան  
Գործադիր տնօրեն  
Աշոտ Կիրակոսյան

  
/ստորագրություն/  
Կ.Տ



### ԿԱՊԱՆԱՌՈՒ

«Շինարար» ՍՊԸ  
Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի  
Երևանյան խճ 20  
ՀՎՀՀ՝ 05511545  
Հ/Հ՝ 24103032125101  
Բանկ՝ «Յունիբանկ» ՓԲԸ «Գյումրի»  
մ/6  
Տնօրեն  
Ալբերտ Նալբանդյան

  
/ստորագրություն/  
Կ.Տ



Հավելված N 6  
« 02 » 07 20 թ. կնքված  
ՇԾ-ԳԸ-ԱՇՁԲ-2019/63 ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու

Կատարող

գտնվելովայրը \_\_\_\_\_  
h/h \_\_\_\_\_  
hվհհ \_\_\_\_\_

գտնվելովայրը \_\_\_\_\_  
h/h \_\_\_\_\_  
hվհհ \_\_\_\_\_

### ԱԿՏ

## ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎԼԱԽԱՏԵՍՎԱԾԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐՏԱՐԱ ԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« \_\_\_\_\_ » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Սույնով Պատվիրատուն և ՀՀ, \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքը, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ \_\_\_\_\_ պայմանագրի 3.2.3 կետի պահանջները, կազմեցին սույն ԱԿՏ-ը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ, \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողը ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրի նկից նախագծով նախատեսված տարածքը:

Տարածող հանձնեց

Տարածքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն  
Կ.Տ.

ազգանուն, անուն  
Կ.Տ.

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ \***

**Գյումրու ժողովրդական գործիքներ պետական նվազագինով գնումների վերանորոգում  
 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

ԳԳ	Հիմնավ.	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	միավորի գին հազ.դր	Ընդհանուրը (հազ. դրամ) 5x6
1	2	3	4	5	6	7

**Քանդման աշխատանքներ**

**Ի-ին հարկ**

1	E11-95 ԲԿՏՄ	Սյուների գաջե սվաղի քանդում, մաքրում լվացում	100մ2	0,21	28,37	5,957
2	E13-5 ԲԿՏՄ	Պատերի կաֆելով երեսապատվածքի քանդում	մ2	32,00	0,66	21,132
3	E13-5 ԲԿՏՄ	Հատակների մետախե երեսապատվածքի քանդում	մ2	47,00	0,66	31,038
4	E17-140 ԲԿՏՄ	Ջեռուցման սարքերի ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	հատ	18	1,09	19,553
